ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 10.10.2023թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 33 (երեսուներեք) անդամից՝ 29-ը, (քսանինը):

Նիստին մասնակցում էին՝

№	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆ
1.	Սերոբյան Երվանդ	Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
2.	Ավետիսյան Նազելի	Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ԺՊ
3.	Նիկողոսյան Գագիկ	ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
4.	Մելքոնյան Հովիկ	Արտաքին համագործակցության կենտրոնի տնօրեն
5.	Մարգարյան Լիլիթ	Գիտական քաղաքականության և նորորարության կենտրոնի տնօրեն
6.	Պետրոսյան Կարինե	Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)
7.	Հովհաննիսյան Օֆելյա	Հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկանի ԺՊ բ.գ.թ., դոցենտ
8.	Մկրտչյան Արթուր	Ռազմական ամբիոնի պետ
9.	Դավինյան Աշոտ	Մինչբուհական կրթության կազմակերպման բաժնի պետ-տնօրեն
10.	Խաչատրյան Վալերի	ՇՊՀ արհմիության նախագահ
11.	Մկոյան Արտաշես	Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենատարեց դոկտոր)
12.	Սարգսյան Սամվել	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
13.	Մարտիրոսյան Լևոն	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ

14.	Մկրտչյան Արթուր	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի տնտեսագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ
15.	Ավետիսյան Գայանե	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի աշխարհագրության և սերվիսի ամբիոնի վարիչի ԺՊ, աշխ. գիտ. թեկ, դոցենտ
16.	Մելքոնյան Լուսինե	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ.,
17.	Ղուկասյան Լուսիկ	Հասարակական գիտությունների ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մանկ. գ.թ., դոցենտ
18.	Աղանյան Գևորգ	Հասարակական գիտությունների ֆակուլտետի սպորտի և արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
19.	Գասպարյան Արշավիր	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի պատմության և իրավագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
20.	Հովհաննիսյան Արտակ	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի պատմության և իրավագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.
21.	Սահակյան Կարինե	Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ
22.	Հովհաննիսյան Անահիտ	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
23.	Մինասյան Ելենա	Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության 4-րդ կուրսի ուսանողուհի
24.	Հակոբյան Աննա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեղագործական քիմիա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի
25.	Ադամյան Հասմիկ	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
26.	Շարոյան Մարիաննա	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի
27.	Մխիթարյան Աիդա	Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության 4-րդ կուրսի ուսանողուհի
28.	Մարգարյան Հրաչուհի	Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի
29.	Ավդալյան Մարիամ	Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

ՕՐԱԿԱՐԳ

1. **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պետական և ներբուհական ուսանողական նպաստների և կրթաթոշակների հատկացման կանոնակարգի հաստատման մասին**

Հաղ.՝ Ուսանողների աջակցության բուհ-գործատու համագործակցության բաժնի պետ **Վ. Էլոյան**

2. **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ընդունելության/ձևակերպման և ուսուցման կանոնակարգի (նոր խմբագրությամբ) հաստատման մասին**

Հաղ.՝ Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի տնօրեն **Լ. Մարգարյան**

3. **ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորվող «Ֆիզիկայի և մաթեմատիկայի միջառարկայական հիմնարար կապերի և առարկայական մեթոդների վեր հանումը որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց» (ծածկագիր՝ 21T-5C039, ղեկավար՝ ՇՊՀ-ի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտ. թեկնածու Վ. Մանուկյան) թեմայի ընթացիկ (տարեկան) հաշվետվության մասին**

Հաղ.՝ Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի տնօրեն **Լ. Մարգարյան**

4. **ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորվող «Նանոնյութերի դեֆորմացիոն մոդելները՝ որպես մոմենտային առաձգականության տեսությամբ ճկուն սալեր և թաղանթներ» (ծածկագիր՝ 21T-2C093, ղեկավար՝ ՇՊՀ-ի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտ. թեկնածու Ա. Սարգսյան) թեմայի ընթացիկ (տարեկան) հաշվետվության մասին**

Հաղ.՝ Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի տնօրեն **Լ. Մարգարյան**

5. **2022թ. նոյեմբերի 11-ին «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում կայացած հանրապետական ուսանողական գիտաժողովի (միջազգային մասնակցությամբ) նյութերի ժողովածուի տպագրության երաշխավորման մասին**

Հաղ.՝ Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի տնօրեն **Լ. Մարգարյան**

6. **Ընթացիկ հարցեր**

Գիտական խորհրդի նախագահ Ե. Սերոբյանը բացելով գիտական խորհրդի նիստը՝ հայտարարեց քվորումի առկայության մասին, քվեարկության դրեց նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց քվեարկության արդյունքում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

29 անդամ. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պետական և ներբուհական ուսանողական նպաստների և կրթաթոշակների հատկացման կանոնակարգի հաստատման մասին

Պարոն Էլոյանը ներկայացրեց, որ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պետական և ներբուհական ուսանողական նպաստների և կրթաթոշակների հատկացման կանոնակարգում կատարված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունները մասամբ պայմանավորված են ՀՀ կառավարության 2006թ.-ի հուլիսի 27-ի 1183N որոշման փոփոխություններով, որը սահմանում է պետության կողմից փոխհատուցվող ուսանողական նպաստի լրիվ և մասնակի փոխհատուցման կարգը և ներբուհական ուսանողական նպաստի մասնակի փոխհատուցման հետ կապված փոփոխությունները, իսկ մի մասն էլ բուհի կողմից առաջարկված լավարկումներ են:

Այնուհետև պարոն Էլոյանը ներկայացրեց, որ ներբուհական զեղչի բոլոր կետերի համար սահմանվել է ՄՕԳ-ի շեմ.

- Բակալավրի կրթական աստիճանում առավելագույն ՄՕԳ-ի շեմը 60 և ավելի,
- Մագիստրատուրայի կրթական աստիճանում առավելագույն ՄՕԳ-ի շեմը 70 և ավելի:
  Պարոն Էլոյանը նշեց, որ այս մոտեցումը բխում է ՀՀ Կառավարության կողմից վերը նշված կարգից, որով նախարարության կողմից տրամադրվող ուսման վարձի մասնակի փոխհատուցումից օգտվող ուսանողները պետք է բացի սոցիալական կարգավիճակից ունենան 60 և ավել միջին որակական գնահատական:
  Գործող կարգով հետևյալ 3 կետերում սահմանված ՄՕԳ-ի շեմը իջեցվել է համապատասխանաբար. բակալավրի կրթական աստիճանում 76-ի փոխարեն սահմանվել է 60, իսկ մագիստրատուրայի կրթական աստիճանում՝ 86-ի փոխարեն 70:
- Մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանողներին - 50% զեղչ,
- 3 և ավելի անչափահաս երեխա կամ 3 և ավելի ուսանող ունեցող ընտանիքների ուսանողներին - 30% զեղչ,
- 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին - 30% զեղչ,

Պարոն Էլոյանը ներկայացրեց, որ առաջարկների և քննարկումների արդյունքում կանոնակարգում ներբուհական զեղչի նոր կետեր են ներառել, դրանք են.

- ՇՊՀ-ի աշխատակիցների երեխաներին ում եղբայրը (քույրը) սովորում է և (կամ) սովորել է ՇՊՀ-ում - 30% զեղչ,
- Պատերազմի և/կամ մարտական գործողությունների մասնակից անձանց սովորող երեխաներին և սովորող ամուսնուն (կնոջը) - 30% զեղչ:

- 3-րդ կարգի հաշմանդամություն ունեցող ուսանողներին - 30% զեղչ,
- Պատերազմի և/կամ մարտական գործողությունների ընթացքում զոհված (մահացած) եղբայր (քույր) ունեցող ուսանողներին - 30% զեղչ:

Ներբուհական զեղչի կետերից դուրս են բերվել.

- Ապրիլյան պատերազմում մարտական հերթապահություն՝ 50% զեղչ:
- Մարտական գործողությունների մասնակցություն՝70 % զեղչ, (կարգավորվում է ՀՀ կառավարության 2006թ.-ի հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշմանբ):

Պարոն Էլոյանը նշեց, որ ներբուհական ուսանողական նպաստների և կրթաթոշակների հատկացման կանոնակարգում հստակեցվել են ֆակուլտետների և մանդատային հանձնաժողովների ձևավորման և գործառույթների իրականացման հաջորդականությունները:

Պարոն Սերոբյանը հավելեց, որ երկու հարց բաց է մնացել, որոնք տեխնիկական են՝ պայմանավորված ժամանակային փոփոխություններով: Ապա շարունակեց, որ քննարկման արդյունքում որոշել էին, սակայն իրավիճակը շատ արագ զարգացավ, դրանք վերաբերում են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված այն ուսանողներին, որոնք իրենց ուսումնառությունը շարունակում են ՇՊՀ-ում և առաջարկ է եղել ՄՈԳ-ի պայմանները պահելով՝ նրանց նկատմամբ կիրառել բուհի կողմից վարձավճարի 50 տոկոսի չափով զեղչի կիրառում և ժամկետային և պայմանագրային զինծառայողները, ովքեր մարտական հերթապահություն են իրականացնում նրանց նկատմամբ կիրառել 20 տոկոս զեղչ: Պարոն Սերոբյանն առաջարկեց այս կետերը ներառել հետագայում, երբ պետության կողմից որոշումներ կկայացվեն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Պարոն Ս.Սարգսյանն առաջարկեց, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողներից գոնե 2-3 ամիս վարձավճար չպահանջել, իրավիճակը կարգավորվելուց հետո միայն այս հարցին անդրադառնալ:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ այս պահին դպրոց, քոլեջ և բուհ դիմած և կցագրված ուսանողներից ոչինչ չի պահանջվել, իրենց կողմից միայն օգնելու պատրաստակամություն կա: Ապա պարոն Սերոբյանը շարունակեց, որ պետք է սպասել, իր կարծիքով պետության կողմից շուտով որոշումներ կկայացվեն բռնի տեղահանված ուսանողների նկատմամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պետական և ներբուհական ուսանողական նպաստների և կրթաթոշակների հատկացման կանոնակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

29 անդամ. կողմ՝29, դեմ՝0, ձեռնպահ՝0:

2. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ընդունելության/ձևակերպման և ուսուցման կանոնակարգի (նոր խմբագրությամբ) հաստատման մասին

Տիկին Մարգարյանը ներկայացրեց, որ կանոնակարգի նոր խմբագրությամբ լավարկումը կատարվել է նկատի ունենալով համալսարանի ամբիոնների կողմից իրենց կենտրոնին ուղղված առաջարկները, ինչպես նաև ներառվել են այն խնդիրները, որոնք առաջացել և նկատվել են այս տարիների ընթացքում: Կանոնակարգը քննարկվել է նաև թերությունների վերացման գործողությունների ծրագրի իրականացման արդյունքների վերահսկման նպատակով ստեղծված հանձնաժողովում, ապա տեղադրվել բուհի պաշտոնական կայքի հարթակում, որտեղ առաջ քաշված կարծիքները հնարավորինս հաշվի են առնվել: Ապա տիկին Մարգարյանը ներկայացրեց այն փոփոխությունները, որոնք ընդգրկված են կանոնակարգում: Տիկին Մարգարյանը նշեց, որ նոր կետերը կարգավորում են ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով 3 կամ 4 տարի ուսումնառություն պլանավորած, բայց չհասցրած և չիրականացված հայցորդների, ասպիրանտների ուսումնառության տարիները երկարաձգելու ընթացակարգերը, նկարագրված է նաև ուսումնառության ընթացքում գիտական ղեկավարի և թեմայի մասնակի կամ ամբողջական փոփոխության ընթացքը, ասպիրանտի, հայցորդի հեռացումը, ազատումը, ուսումնառության դադարեցումը և վերականգնումը կարգավորող կետերը, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրատուրայի կրթական աստիճանի գերազանցության դիպլոմով ավարտող շրջանավարտների ասպիրանտ հայցորդների ուսումնառության համար զեղչի սահմանման կետերը, ինչպես նաև ներկայացված է ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի նոր ձևաչափ, որն իր մեջ ներառում է նախկինում գործող երկու պլաններ՝ անհատական և ընդհանուր: Տիկին Մարգարյանը նշեց, որ կանոնակարգում կատարվել են նաև մի շարք մասնակի փոփոխություններ կապված ռեկտորի հրամանով ձևավորվող ընդունող հանձնաժողովի կազմի և աշխատակարգի հետ, ամփոփիչ ստուգումների բազմագործոնային գնահատական ձևավորող կշիռների, գիտական ղեկավարի և ատենախոսության թեմայի հաստատման, յուրաքանչյուր տարում պլանով նախատեսված կրեդիտների բաշխվածության, ինչպես նաև թողարկող ամբիոնի կողմից հաշվետվություն ներկայացնելու ընթացքում ասպիրանտի կամ հայցորդի չատեստավորվելու, պայմանական ատեստավորվելու գործընթացների կարգավորման հետ կապված: Տիկին Մարգարյանը նշեց, որ փոփոխություններ կան նաև 6 ամսյա աշխատանքային ստաժ ունեցող հայցորդների և ասպիրանտների պրակտիկայի կազմակերպման գործընթացները կարգավորելու հետ կապված:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա/հայցորդության համակարգ) ընդունելության/ձևակերպման և ուսուցման կանոնակարգը (նոր խմբագրությամբ):

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

29 անդամ. կողմ՝29, դեմ՝0, ձեռնպահ՝0:

3. ԼՍԵՑԻՆ՝

ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորվող «Ֆիզիկայի և մաթեմատիկայի միջառարկայական հիմնարար կապերի և առարկայական

մեթոդների վեր հանումը որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց» (ծածկագիր՝ 21T-5C039, ղեկավար՝ ՇՊՀ-ի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտ. թեկնածու Վ. Մանուկյան) թեմայի ընթացիկ (տարեկան) հաշվետվության մասին

Տիկին Մարգարյանը ներկայացրեց, որ երկու հաշվետվության փաթեթներն էլ նախօրոք ներկայացվել են գիտական խորհրդի անդամներին, նախատեսված ծրագրերը կատարվում են և խնդիրներ չկան:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Նշելով, որ լրիվությամբ կատարվել են 01.10.2022թ.-30.09.2023թ. ժամանակահատվածի համար նախատեսված գիտական հետազոտությունները, հրատարակված են բավարար քանակությամբ գիտական հոդվածներ, ընդունել հաշվետվությունը, այն գնահատել դրական և ներկայացնել ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

29 անդամ. կողմ՝29, դեմ՝0, ձեռնպահ՝0:

4. ԼՍԵՑԻՆ՝

ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորվող «Նանոնյութերի դեֆորմացիոն մոդելները՝ որպես մոմենտային առաձգականության տեսությամբ ճկուն սալեր և թաղանթներ» (ծածկագիր՝ 21T-2C093, ղեկավար՝ ՇՊՀ-ի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտ. թեկնածու Ա. Սարգսյան) թեմայի ընթացիկ (տարեկան) հաշվետվության մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Նշելով, որ լրիվությամբ կատարվել են 01.10.2022թ.-30.09.2023թ. ժամանակահատվածի համար նախատեսված գիտական հետազոտությունները, հրատարակված են բավարար քանակությամբ գիտական հոդվածներ, ընդունել հաշվետվությունը, այն գնահատել դրական և ներկայացնել ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

29 անդամ. կողմ՝29, դեմ՝0, ձեռնպահ՝0:

5. ԼՍԵՑԻՆ՝

2022թ. նոյեմբերի 11-ին «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում կայացած հանրապետական ուսանողական գիտաժողովի (միջազգային մասնակցությամբ) նյութերի ժողովածուի տպագրության երաշխավորման մասին

Տիկին Մարգարյանը ներկայացրեց, որ գիտաժողովին մասնակցել են շուրջ հարյուր ուսանողներ ՀՀ-ի տարբեր բուհերից, հոդվածներ ներկայացրել են 85-ը, որոնք տրամադրվել են ՇՊՀ-ի ամբիոնների համապատասխան մասնագետներին գրախոսման նպատակով, դրանցից 66-ը երաշխավորվել են տպագրության: Կազմվել է նյութերի ժողովածուն, գիտական խորհրդի դրական եզրակացության արդյունքում դրանք կտեղադրվեն պաշտոնական կայք:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2022 թ.-ի նոյեմբերի 11-ի հանրապետական ուսանողական գիտաժողովի նյութերը երաշխավորել տպագրության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

29 անդամ. կողմ՝29, դեմ՝0, ձեռնպահ՝0:

Ընթացիկ հարցեր

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների հետ աշխատում են նաև ՇՊՀ-ի ուսանողները որպես կամավորներ, ովքեր շատ ակտիվ, լուրջ ու գիտակցված վարք են դրսևորում այս աշխատանքներում, իրենք այս հարցով համագործակցում են մարզպետարանի և քաղաքապետարանի հետ և ամեն ինչ անում են մարզ տեղափոխված արցախցիների կարիքները ժամ առաջ հոգալու համար:

1.Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր	Ե. ՍԵՐՈԲՅԱՆ
2.Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ԺՊ	Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ
3.ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
4.Արտաքին համագործակցության կենտրոնի տնօրեն	Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ
5.Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի տնօրեն	Լ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
6.Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)	Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
7.Հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկանի ԺՊ	Օ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
8.Ռազմական ամբիոնի պետ	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
9. Մինչբուհական կրթության կազմակերպման բաժնի պետ-տնօրեն	Ա. ԴԱՎԻՆՅԱՆ
10.ՇՊՀ արհմիության նախագահ	Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
11.Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենատարեց դոկտոր)	Ա. ՄԿՈՅԱՆ
12.Պատմ. գիտ. դոկտոր, (ամենաերիտասարդ դոկտոր)	Հ. ԽՈՐԻԿՅԱՆ
13.ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր	Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
14.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ	Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
15.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի տնտեսագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

16.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի աշխարհագրության և սերվիսի ամբիոնի վարիչի ԺՊ, աշխ. գիտ. թեկ, դոցենտ	Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
17.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ.	Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ
18.Հասարակական գիտությունների ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մանկ. գ.թ., դոցենտ	Լ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
19. Հասարակական գիտությունների ֆակուլտետի սպորտի և արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ	Գ. ԱՂԱՆՅԱՆ
20.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի պատմության և իրավագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ	Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
21.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի պատմության և իրավագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.	Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱ
22. Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ.,դոցենտ	Կ. ՍԱՀԱԿՅԱՆ
23.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱ
24.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր	Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
25.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի թարգմանչական գործ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի	Լ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
26. Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության 3-րդ կուրսի ուսանողուհի	Ե. ՄԻՆԱՍՅԱՆ
27. Հասարակական գիտությունների ֆակուլտետի սոցիալական աշխատանք մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի	Մ. ԲԵԺԱՆՅԱՆ
28.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեղագործական քիմիա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի	Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

29.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի		Հ. ԱԴԱՄՅԱՆ
30.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի		Մ. ՇԱՐՈՅԱՆ
31.Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության 3-րդ կուրսի ուսանողուհի		Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ
32. Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի		Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
33. Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի		Մ. ԱՎԴԱԼՅԱՆ